ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

4.10.2019
343-24

ՀՀ արտաքին գործերի նախարար
պարոն Զոհրաբ Մնացականյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մնացականյան,

Քաղաքացիներ Լիանա,Անուշ և Եվգենյա Դրամփյանները դիմել էին Ինֆորմացիայի ազատության կենտրոն՝ խնդրելով աջակցել իրենց տեղեկատվություն ստանալու հարցում: ԻԱԿ-ը 28.05.2019 թվականին 342-38 հարցմամբ դիմել էր նախարարություն,սակյան տրամադրված պատասխանը թերի էր:

23.05 2019 թ.-ի հարցմանն ի պատասխան՝ նախարարությունը 7.06.2019-ին ուղարկել է գրություն, որի մեջ նշվում է. «Այս պահին Հայաստանի և Իսրայելի միջև չկան կրթության ոլորտում միջպետական փոխանակման ծրագրեր»: Այնինչ ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքի երկկողմ հարաբերություններ բաժնում զետեղված փաստաթղթերի մեջ առկա է «ՀՀ կառավարության և Իսրայելի Պետության կառավարության միջև մշակույթի, կրթության, գիտության, սպորտի և երիտասարդության ոլորտներում 2017-2020 թթ. համագործակցության մասին» Գործնական ծրագիր (25 հուլիսի, 2017թ.) համաձայնագիրը (https://www.mfa.am/hy/bilateral-relations/il?fbclid=IwAR0WVKmd5Rad5W9V3Qp8FjK4_DOIiRn1MhFoFXPj9RkNNZ4ilyo8hu4_T-o):

Բացի այդ նախարարության պատասխանի մեջ չկար տեղեկատվություն հարցման երկորդ հարցի վերաբերյալ:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ի՞նչ հիմքով է նախարարության 07.06.2019թ.-ի պատասխանում նշվել, որ «Այս պահին Հայաստանի և Իսրայելի միջև չկան կրթության ոլորտում միջպետական փոխանակման ծրագրեր», եթե նախարարության պաշտոնական կայքի երկկողմ հարաբերություններ բաժնում առկա է «ՀՀ կառավարության և Իսրայելի Պետության կառավարության միջև մշակույթի, կրթության, գիտության, սպորտի և

երիտասարդության ոլորտներում 2017-2020թթ. համագործակցության մասին» Գործնական ծրագիր (25 հուլիսի, 2017թ.) համաձայնագիրը:

2. Խնդրում ենք տրամադրել «ՀՀ կառավարության և Իսրայելի Պետության կառավարության միջև մշակույթի, կրթության, գիտության, սպորտի և երիտասարդության ոլորտներում 2017-2020թթ. համագործակցության մասին» Գործնական ծրագիր (25 հուլիսի, 2017թ.) հետևյալ փաստաթղթի ամբողջական տարբերակը կամ էլեկտրոնային հղումը:
3. Խնդրում ենք նշել՝ ինչ կոնկրետ ծրագրեր կան, որոնք հնարավորություն են տալիս հայաստանցի մշակույթային գործիչներին ներկայացնել իրենց ստեղծագործություններն ու կատարումներն արտերկրում:
4. Խնդրում ենք տեղեկացրեք, թե ինչ մշակութային ծրագեր են իրականացվում ԱՄՆ-ի հետ և ով է այդ ծրագրերին ՀՀ քաղաքացիների մասնակցությունն ապահովող կառույցը/ստորաբաժանումը:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան